ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Լեռնակերտի Վ. Բարեղամյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում ԹԳՀԳ (5 դասաժամ) առարկայի ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով ՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1),
2) բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձնագիր,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում) ,
5) աշխատանքային գրքույկ,
6) ինքնակենսագրություն (Ձև 5),
7) մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի,
8) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
9) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,
10) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում),
11)որակավորման տարակարգ (առկայության դեպքում):
12) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը, փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի դեկտեմբերի 17-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա 2026 թվականի հունվարի 9-ին ՝ ժամը 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի ‹‹Լեռնակերտի Վ. Բարեղամյանի անվան հիմնական դպրոց››-ում:

Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ. Լեռնակերտ, փողոց 1, շենք 1:

Տեղեկությունների համար զանգահարել 093-14-40-95 հեռախոսահամարով: